

## Անհատական և կոլեկտիվ ինքնության սոցիոմշակութային առանձնահատկությունները

Գլոբալիզացիայի այս դարաշրջանում համաերկրային տեսք են ստանում ինչպես տնտեսական կամ քաղաքական հարաբերությունները, այնպես էլ մարդկային հոգևոր հետաքրքրությունները, մինչև իսկ անհատի հոգևոր պահանջմունքները: Այսօր մեզ համակած ճգնաժամը աշխարհայացքային, մեծապես նաև հոգևոր-գաղափարական ճգնաժամ է, որն իր անմիջական արտահայտությունն է գտնում հասարակական-քաղաքական տարբեր ոլորտներում: Առկա հասարակական-քաղաքական ծայրահեղ բևեռացումները, առօրեական մակարդակին իջած ծայրահեղ անհանդուրժողականությունը մեր պատմական ավանդույթներին խորթ երևույթ են և խարխլում են են սոցիալական կյանքի կառուցման ու կարգավորման հիմքերը: Տեղի է ունենում մարդու մշակութային կեցության հիմնարար սկզբունքների արմատական վերափնաստավորում: Հինը ջնջելու և նորը սկսելու գաղափարը հակասում է մեր պատմական փորձառությանը, ավանդույթներին, սովորույթներին ու ազգային ինքնությանը: Ինքնությունը տարբեր փիլիսոփայական համատեքստերում տարբեր մեկնություններ ունի: Մի դեպքում, օրինակ, այն դիտարկվում է որպես ուրիշներից տարբերվելու հատկություն, իսկ մեկ այլ դեպքում՝ որպես վիճակների նույնություն: Կախված տվյալ երկրի տնտեսությունից և մշակույթից, ազգային ինքնության որոնումները ակտուալ են բոլոր երկրների համար: Լիարժեք գոյատևելու համար էթնոսը պետք է գիտակցի իր արժանիքներն ու թերությունները, իր գաղափարները և այն, թե ժամանակի ընթացքում ինչու՞ են փոխվում այդ գաղափարները: Համաաշխարհայնացման երևույթը խորապես կերպարանափոխելով ազգային պետությունների դիրքը, միաժամանակ կերպարափոխման խնդիր է դնում ազգային ինքնության առջև: Ինքնության հարցը ձեռք է բերում բազմադեմ ու դժվար սահմանելի ընթացք: Մշակութային բազմազանությունը սկսում է բնութագրվել որպես ազգային ճգնաժամ: Միաժամանակ չի մերժվում մշակութային բազմազանությունը և մշակութային զանազանությունների համադրությունը:

Հասարակության սոցիալական փոխակերպությունների հետևանքով առաջանում է հիմնախնդիր, թե հասարակությունը որքանո՞վ է պատրաստ

ընդունելու այդ փոփոխությունները: Յուրաքանչյուր մարդ ինտուիցիայով գիտակցում է, որ պետք է ունենա իրենը՝ իր զարգացման ճանապարհը, նպատակներն ու ձգտումները: Այս ինքնուրույնը պետք է հիմնավորված լինի յուրաքանչյուր անձի կամ ազգի կողմից և պետք է համապատասխանի ներքին գիտակցված և ոչ գիտակցված պահանջմունքներին և ձգտումներին: Բ.Ռասսելի խոսքերով ասած, եկել է այն ժամանակաշրջանը, որ մենք ժամանակակից աշխարհում վստահորեն կարող ենք ապրել, բայց պետք է ապրենք այնպես, որ թույլ չտանք խոցելու մեր մտածողությունը և գործունեության ձևը:

Այսօր բազմաթիվ մարտահրավերների, տնտեսական, սոցիալական ու բազմաթիվ այլ դժվարությունների մեջ ազգային ինքնության, ազգային տիպի, տեսակի պահպանումը կարևորագույն խնդիր է: Անվերապահորեն ընդունելով եվրոպական արժեքները, ստացվում է այնպես, որ համատարած հրաժարվում են ավանդական մշակութային արժեքներից և ազգային ինքնությունից: Յուրաքանչյուր ազգի ինքնությունը պատմական, մշակութային և հոգեբանական գործոնների համադրման արդյունք է: Ինքնության երկու բևեռները՝ «նույնությունը» և «այլությունը» անընդմեջ շրջափոխվում են և ապահովվում նրա բնականոն շարունակականությունը ժամանակի և տարածության մեջ: Այն հիմնականում կապված է **ինքնագիտակցության** հետ, որի միջոցով էլ նրա երկու բևեռները դառնում են ճանաչելի և կառավարելի: Գլոբալ մասշտաբով, երբ ընդլայնվում են միջմարդկային փոխհարաբերությունները, ավելի դժվար է դառնում ավանդական մշակութային ժառանգության պահպանումը: Խնդիրն այն է, որ պետք է պահպանել ներքին հոգևոր փորձը, որի շնորհիվ ինքնության գործընթացները ձեռք են բերում հումանիտար բնույթ: «Նույն ազգի ներկայացուցիչները հաճախ են հաղորդակցվում այլ մշակույթների և քաղաքակրթությունների պատկանող մարդկանց հետ, իսկ ժամանակակից հաղորդակցման միջոցները թույլ են տալիս մարդուն իրեն նույնացնել իրենից շատ հեռու գտնվողների հետ: Նրանց հետ, ովքեր խոսում են նույն լեզվով, ունեն նույն հավատը, կամ մեծացել են նույն մշակույթում»<sup>1</sup>: Այս հարցի վերաբերյալ ավելի այժմեականություն է ձեռք բերում տեղեկատվական հասարակության և գլոբալ մշակույթի գործընթացում անհատական և կոլեկտիվ ինքնության ուսումնասիրումը:

Եթե հոգեբանները ինքնությանը դիտարկում են որպես ներքին գործընթաց /կարևոր է ուսումնասիրել հիշողությունը, մարդու ֆիզիկական վիճակը,

<sup>1</sup> Хантингтон С. Кто мы?, М., АСТ, 2004, с.38.

մոտիվացիան/, իսկ սոցիոլոգները հակված են ունեն այն գնահատել հասարակության և նրա ինստիտուտների տեսանկյունից /մասնագիտությունը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, սեռը, ռասսան, կրթության մակարդակը և այլն/, ապա փիլիսոփայության տեսանկյունից կարևորը ինքնության կերպարի նորմատիվային հարցն է. կյանքում ինչպիսի՞ զաղափարների հետևել, արդյո՞ք բավարար են այն արժեքները, որոնցով մենք կողմնորոշվում ենք, ինչպե՞ս է մարդը պատմական փոխակերպման գործընթացներում գտնում գոյության համար անհրաժեշտ հիմքը: Բայց յուրաքանչյուր մոտեցում ժխտում է ինքնության որոշ տեսանկյուններ: Եթե ինքնությունը գործում է անհատական գիտակցության մեջ, ապա ինչու՞ է այն կախված հասարակական իրավիճակներից: Եթե ինքնությունը պարզապես դերերի համադրություն է, ապա ինքնության ճգնաժամը ինչու՞ է տեղի ունենում անկախ հասարակական դերից:

Տեղեկատվական տնտեսության, մշակույթի, գլոբալ քաղաքականության պայմաններում ինքնության ճգնաժամը դառնում է դարի հիմնախնդիրը: Այդ ճգնաժամը հիմնավորվում է նաև նրանով, որ ապրում ենք էկոլոգիայի և քաղաքականության, ինչպես նաև տնտեսության բարձր ռիսկի շրջանում: Անորոշությունը և մարտահրավերները ստեղծում են դեպրեսիայի և պեսիմիզմի զգացողություն, հարուցում կախվածության տարբեր ձևեր, անօգնության, իրական աշխարհից փախուստի զգացողություն և այլն: Սա տանում է ինքնության կորստի, քանի որ հոգևոր անպատասխանատվությունը և հաղորդակցման համաշխարհային ցանցի ձևավորումը նպաստում է ինքնության ճգնաժամի խորացմանը: Ժամանակակից զանգվածային տեղեկատվական միջոցները և տեղեկատվական համակարգերը խախտում են էթնոսի, կրոնի, ազգության սահմանները, խարխլում են ինքնություն ձևավորող սոցիալական ինստիտուտների գործառնության հիմքերը: Արդի պայմաններում ձևափոխվում են նաև միջանձնային հարաբերությունները, յուրաքանչյուր մարդ ներկայանում է ինքն իրեն և հույսը դնում է իր վրա: Որքան շատ ենք ուշադրություն դարձնում 20-րդ դարի էկզիստենցիալ հիմնահարցերին, այնքան ավելի շատ ենք գտնում հոգևոր անհամապատասխանություններ: Եթե իրոք չկա ընդհանուր էթնիկ սկզբունքներ, ապա ինչպե՞ս է մարդկությունը գտնում զարգացման ճշմարիտ զաղափարներ: Այս առնչությամբ ծագում են մի շարք հիմնախնդիրներ. ինչպիսի՞ սոցիալական, մշակութային, կենցաղային պայմաններ են նպաստել պատմության մեջ մարդու ինչքնաձանաչմանը և զարգացմանը, ինչպե՞ս է տեղի ունեցել կոլեկտիվ և անհատական ինքնության հիմնավորումը, ինչպիսի՞ մարդկային

հանրային գործունեությունն է նպաստել ինքնության գործընթացի զարգացմանը: Արդյո՞ք պատահական է այն փաստը, որ ինքնությունը վերելք է ապրում հատկապես տեղեկատվության դարաշրջանում:

Այս հարցերի առնչությամբ հատկապես առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել կոլեկտիվ և անհատական ինքնության խնդրին, քանի որ, ինչպես նկատում է Է.Էրիկսոնը, մարդը ի սկզբանե ձևավորվում է աշխարհագրական, պատմական որոշակի խմբերում՝ ընտանիքում, հանրությունում, ազգում:<sup>2</sup> Այս առնչությամբ նա գտնում է, որ կյանքի առաջին փուլում մարդը ձեռք է բերում **անհատական ինքնության** հիմնական նշանները. *կենսաբանական կայունությունը*, արտաքին միջավայրից պաշտպանվելը, գոյաբանական անվտանգությունը, սկզբնական շրջանում ծնողների կողմից պաշտպանվածությունը, պահպանելու ձգտումը և այլն: Անհատական ինքնությունը սկսվում է մարմնի զգացողությունից: Է. Կասսիրերը առանձնացնում է հետևյալ տարրերը. արտաքին տեսքը, շարժ ու ձևը, զգայությունների կարգավորման եղանակները և այլն: Այնուհետև գալիս է *ինքնահամոզվածության* փուլը: Այս եղանակով մարդը իր վարքը համեմատում է կյանքի օրենքների և ստանդարտների հետ: Այնուհետև զարգանում է *խոսքը*, որից հետո՝ *յուրայինների տարբերումը օտարներից: Ինքնության* սկիզբը դրվում է տարրական բաղադրիչներից՝ սեռից և տարիքից: Ավելի ուշ ի հայտ է գալիս ինքնաառանձնացման և անհատական կյանքի պլանը: Արտաքին և ներքին աշխարհի անվերջության հիմնավորումը, որը դրական նշանակություն է ստացել նոր ժամանակներում, տեղի է ունենում ամբողջ կյանքի ընթացքում<sup>3</sup>: Անհատական ինքնության տարրերը բնութագրվում են կենսաբանական, ինքնապահպանման, հանրության մեջ մնալու, մարդկային նորմալ հարաբերություններ հաստատելու, գոյաբանական անվտանգության, ավանդույթների պահպանման կամ փոփոխման տեսանկյուններից:

Անգիտակցականի բացահայտումը հսկայական նշանակություն ունեցավ մարդկության վերաբերյալ գիտության, նրա շարժման և զարգացման վրա: Եթե չլինեք անգիտակցականը, գրեթե ոչ մի տարբերություն չէր լինի մարդկանց միջև: Յունգի կարծիքով. «Մեր անգիտակցական միտքը, ինչպես նաև մեր մարմինը անցյալի հիշողությունների և հետքերի պահեստարան է»:<sup>4</sup> Մարդը ծնվում է ոչ

<sup>2</sup> Эриксон Э. Детство и общество. СПб., 1996, с.66.

<sup>3</sup> Кассирер Э. Опыт о человеке. Введение в философию человеческой культуры. // Проблема человека в западной философии. М., 1988, с.28.

<sup>4</sup> Юнг К.-Г. Архетипы коллективного бессознательного. М., 1991, с. 78.

միայն կենսաբանական, այլ նաև հոգեբանական ժառանգականությամբ: Յուրաքանչյուր էթնոս ունի իր սեփական նախաձևը: Էթնոմշակութային նախաձևերի առկայությունը թույլ է տալիս ասելու, որ ազգային բնավորության գիտակցական շերտի կողքին գոյություն ունի նաև անգիտակցական շերտ: Այս երկու շերտերի վրա հիմնվում է անհատականն ու սոցիալականը: Մարդու զարգացման մեջ գերիշխողը սոցիալական տեսանկյունն է: Ըստ այդմ` ամբողջականության պահպանման, լեզուների տիրապետման, շփման, նորմերի, ավանդույթների անհրաժեշտության տեսանկյունները դառնում են անհատի ինքնության սոցիալական ոլորտի հիմնական բնութագրող տարրերը:

Ավելի ուշ ի հայտ է գալիս արժեքային տեսանկյունը, որի շնորհիվ մարդը պահպանում և զարգացնում է իր ինքնապահպանման և կյանքի հաստատման եղանակները, ինքնուրույն ընտրում կյանքի նպատակներն ու միջոցները: Անհատի ստեղծած «աշխարհի պատկերի» ռացիոնալությունը պայմանավորված է ոչ այնքան տրամաբանական կապերով, որքան հիմնարար հասկացություններով, որոնք ծառայում են աշխարհի մեկնության համար` դրանով իսկ ձեռք բերելով արժեքների նշանակություն: Մարդը չի կարող անցնել իր ժողովրդի ոգու վրայով, սակայն նա կարող է վերլուծության ենթարկել այն հիմնարար հասկացությունները, որոնք կոլեկտիվ ինքնության կրողն են:

**Կոլեկտիվ ինքնություն:** Ի տարբերություն անհատական ինքնության, կոլեկտիվ ինքնությունն այնքան էլ լավ ուսումնասիրված չէ, չնայած ցանկացած սոցիալական փոփոխությունների ժամանակ կոլեկտիվիզմը առաջնային է:

Կոլեկտիվ ինքնության հիմքը կազմել են առաջին սոցիալական կապերը: Ի սկզբանե առաջին հանրույթը հակադրվել է իրեն շրջապատող միջավայրին: Այդ միջավայրը նրա անփոխարինելի և միակ տարածքն է եղել: Կոլեկտիվ ինքնությունը առանձնացնում է ընդհանուր փորձ, ինֆորմացիայի ստացման ընդհանուր աղբյուր: Սոցիալիզացիայի եղանակները կախված են տարբեր տեղեկատվական համակարգերից: Անցումը տնտեսությանը բերում է ամբողջ սոցիալական կապերի նոր ձևավորմանը: Ներփակվածությունը իր տեղը գիջում է հանրությանը: Ձևավորվում է սոցիալական փոխգործունեության հզոր գրավիտացիոն դաշտ: Յուրաքանչյուր հանրային միավոր ձգտում է ապրել ավելի հզոր, ձեռք բերել ամեն ինչ ինքնուրույն, ունենալ իր անհատականությունը, իր առաջնորդը, իր սեփականությունը, իր տոները, իր կյանքի ոճը: Չնայած, որքան էլ ջանա անհատը, դա միայն իր ուժերով լուծվող հարց չէ: Կոլեկտիվ ինքնությունը ձգվում է

տարածության և ժամանակի մեջ, հակադրվում է փոփոխություններին և արտահայտվում է նշանային համակարգով: Տեղեկատվական և հաղորդակցման միջոցներով մարդիկ ընդհանուր լեզու են գտնում, ձեռք են բերում փորձ և արժեքներ: Տեղեկատվական և հաղորդակցման համակարգերը դառնում են այն հիմնական միջոցները, որոնցով պահպանվում, փոխանցվում են կոլեկտիվի գիտելիքները, կոլեկտիվ ինքնության հիմնական բաղադրամասերը: Կոլեկտիվ ինքնությունը բնութագրվում է պատմական անցյալով, պատմական հիշողությամբ, առասպելաբանությամբ, համընդհանուր ծեսերով, կենսա-սոցիալական փորձով, աշխարհագրական դիրքով, տարածության ազգային ընկալումով, ինչպես նաև՝ տնտեսվարման ընդհանուր մոդելներով:

Դարերի ընթացքում ճակատագրի ընդհանրությամբ հիշյալ ազգային գործոնների հիման վրա /լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, մտածողություն, ինքնագիտակցություն, բնավորություն, հոգեկան կերտվածք և այլն/ ձևավորվում է յուրաքանչյուր ազգի **ազգային ինքնությունը**, ազգային դիմագիծը և ազգային անհատականությունը: Ազգային յուրահատկության մասին խոսքը է գնում այն ժամանակ, երբ սկսում ենք համեմատել երկու տարբեր ազգերի: Եվ այն ամենը, ինչ այս համեմատության ժամանակ չի համընկնում /լեզվի, վարքի, կենցաղի, արվեստի/, ազգային յուրահատկությունն է: Ոչ մի տեղ այդքան հստակ չի երևում անհրաժեշտ կապը ազգային ինքնության հետ, որքան փիլիսոփայության, պատմության և հոգեբանության մեջ: Եթե սոցիոլոգներին և հոգեբաններին հետաքրքրում է տարբեր ազգերի և էթնիկ խմբերի միջև եղած տարբերությունները, ապա փիլիսոփաներին հետաքրքրում է այդ տարբերությունների բնույթի վերաբերյալ հարցերը: Ազգային ինքնության ուսումնասիրումը նպաստում է ազգային ինքնագիտակցությանը, և որպեսզի ձևավորվի այն, պետք է հստակ դրվի որոշակի ձգտումներ, համամարդկային գաղափարները իրականացնելու ունակություններ: «Ազգային ինքնությունը ենթադրում է ազգային մտածողության ինքնություն: Չէ՞ որ առանց վերջինիս ոչ ազգ կա, և ոչ էլ ազգային ինքնանույնացում»<sup>5</sup>: Հենց ինքնագիտակցությունն է, որ հիմք և նախադրյալ է հանդիսանում գիտակցության համար: Ազգային ինքնագիտակցությունը հանդես է գալիս որպես ազգի անցյալի, անհատի ազգային կերպարի, ազգային կեցության ամբողջություն:

Երբ ետ ենք նայում մեր նախնիների ճակատագրերին, նկատում ենք, որ այդ ճակատագրերը կանխորոշում են մեր ինքնությունը և հոգեկերտվածքի

<sup>5</sup> Լ.Աբրահամյան, Ազգային ինքնությունը որպես պրոցես, «Ինքնություն», Եր., 1995, էջ 22:

ընդհանրականությունը: Գ.Շպեդի կարծիքով սոցիումի կոլեկտիվ ոգին չի կարելի բացատրել ելնելով գենեզիսից:<sup>6</sup> Սակայն համոզիչ է այն հանգամանքը, որ ազգային ընդհանրականությունը ծագումնաբանական ու արյունակցական է: «Որպես ազգային ճակատագրի կրող, ազգային անհատականությունը իր էթնոգենեզային կեցության արժեքների կրողն է: Բայց որպես ընկերային արժեքներով ու շահերով ապրող քաղաքացի, նա իր ազգային պատկանելիությունից ածանցյալ «գոյութենական շահերը» ապրում և իմաստավորում է ընկերային շահերի տեսանկյունից: Մարդու երկրաչափության երկու մակարդակներում /ազգային-ընդհանրական և անհատական-ընկերային/ ազգային հոգեկերտվածքը ենթարկվում է տարբեր շարժառիթներով պայմանավորված արդիականացման ու ռացիոնալացման «վերստուգման»<sup>7</sup>: Պատմությունը զարգանում է մոլեկուլյար մակարդակով, բայց հասարակական ուժը կարող է կուտակվել հասարակական հաղորդակցության միջանձնային հարաբերություններում: Քանի որ կոլեկտիվը անհատների հանրություն է և առաջնորդվում է ընդհանուր տրամաբանությամբ, որն ուղղված է տվյալ հասարակության պահպանմանը, պետք է միաժամանակ ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ զարգանա **անհատականությունը**:

Ցանկացած ազգ, որքան էլ այն փոքր լինի, պետք է տեղ զբաղեցնի միջազգային հարաբերությունների համակարգում: Անզլիացի սոցիոլոգ Գիդդենսի կարծիքով. « պետք է ուշադրություն դարձնել ժամանակակից անգամ ամենափոքր և ոչ հակադրելի պետությունների ներքին գործընթացներին, ինչպես նաև սոցիալական կազմակերպությունների և սոցիալական կապերի փոխկապակցվածությանը, որոնք դուրս են գալիս ազգային–պետական սահմաններից»<sup>8</sup>: Սակայն արդի ճգնաժամը սոցիալական շերտերի և նույնիսկ էթնոսի ճգնաժամ է: Այս ճգնաժամը մարդկային կյանքի, գործունեության ճգնաժամ է, այն մարդկանց, որոնց ճակատագրերը ձևավորվել են դարերով, ապացուցված ավանդական ռացիոնալ աշխարհընկալման կեցության նորմերով ու կանոններով: Նոր ժամանակները մի կողմ են դրել այս սոցիոնշակութային հիմքերը: Առաջին ճգնաժամային փոխակերպումը աշխարհի տարածականության սահմանափակումն է: Աշխարհը դադարել է անսահմանափակ լինելուց: Այն համընդհանուր է: Գլոբալ զարգացման հետևանքով, ժամանակակից

<sup>6</sup> Шпет Г. Г. Сочинения. М., 1989, с.164.

<sup>7</sup> Է.Ա.Հարությունյան, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, եր., 2004թ., էջ 64:

<sup>8</sup> Гидденс Э. Девять тезисов о будущем социологии.// Теория и история экономических и социальных институтов и систем. Зима. 1993. С.67.

աշխարհը ավելի ու ավելի է փոփոխվում: Քանի որ աշխարհը դառել է միասնական, հետևաբար մշակույթը նույնպես դառել է ընդհանուր: Մեր ժամանակներում գործում և պահպանվում են աշխարհի շատ ազգերի յուրահատկությունները: Կան ազգեր, որոնք ծանոթ չեն եվրոպական մշակույթի ավանդական ժառանգություններին, սակայն, որը նրանց չի խանգարում գոյատևել և ապրել փակ մշակութային տարածության մեջ: Սակայն մշակույթի առանձնահատկությունն այն է, որ կարող է աշխարհը միավորել գլոբալ զարգացման մեջ: Անհատը շատ հնարավորություններ ունի իրեն նույնականացնել իդեալական մարդկանց սովորություններով, գաղափարներով, բնավորության գծերով: Դրա համար անհրաժեշտ է, որ համոզվի, որ իր ընտրած ճանապարհը հանդիսանում է խմբային ինքնության լավագույն տարբերակը: Առաջին հայացքից թվում է, թե ազգային բնավորությունը յուրահատուկ է և անկրկնելի, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա մի քանի էթնոսների բնորոշ հատկություններ են: Առհասարակ տարածված է հրեաների հետ հայերի համեմատությունը՝ նկատի ունենալով, որ երկու ժողովուրդներն էլ հին են, ունեն սիյուռք և ենթարկվել են ցեղասպանության: Սակայն, ինչպես նշում է Հ.Ա.Գևորգյանը, «սրանք առաջին հայացքից նկատված նմանություններ են, բայց երկու ժողովուրդների կեցության պատմության մեջ կան էական տարբերություններ, որոնք յուրօրինակություն են տալիս նաև հիշյալ նմանություններին»<sup>9</sup>: Օրինակ՝ որ հայ ժողովուրդն ունեցել է իր պատմական հայրենիքը, իսկ Պաղեստինից տարագրվելուց հետո հրեաները չեն ունեցել իրենց հայրենիքը: Հայ ժողովուրդն ունեցել է մեկ մշակույթ, իսկ հրեաները չեն ունեցել այդպիսի միասնական մշակույթ/ազգային դպրոց, ազգային կրթական համակարգ, որը կլիներ այդ մշակույթի գործառնության ու ժառանգորդման միջոց/: Անձի ազգային նույնացման դեպքում անձը գիտակցում է իր պատկանելիությունը որոշակի էթնիկական հանրությանը: Այն չի նույնացվում էթնիկության հասկացությանը, քանզի վերջինիս առկայության պայմաններում էթնիկական պատկանելիությունը որոշվում է օբյեկտիվ հատկանիշներով՝ լեզվով, մշակույթով, ընդհանուր կենսաբանական ծագմամբ: Ազգային նույնացումը որևէ ազգային հանրության հետ անձի կողմից իրեն նույնացնելու և մյուսներից առանձնացնելու ապրումն է: Այն իրականանում է սոցիալական, մշակութային, հոգեբանական գործոնների ազդեցությամբ: Յուրաքանչյուր ժողովրդի շարժումները սեփական մշակույթի ներսում օրինաչափ են ու հարազատ: Դրանք բազմադարյան պատմության ընթացքում հաստատված

<sup>9</sup> Հ.Ա.Գևորգյան, Փիլիսոփայություն.պատմություն. մշակույթ, Ե., 2005, էջ.430:



կենցաղի, ավանդույթների, աշխարհըմբռնման, կրոնի և այլ գործոնների արդյունք են: Ազգային նույնացման սոցիալական բաղադրիչը իր մեջ ներառում է սոցիալական այն միջավայրը, որտեղ տեղի է ունենում անձի սոցիալականացման գործընթացը: Վերջինս կարող է լինել ազգային նույնացման համար նպաստավոր կամ աննպաստ պայման: Օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով՝ որոշ մարդիկ բնորոշվում են տար էթնիկ նույնությամբ հատկապես այն դեպքում, երբ բազմազգ հասարակության մեջ օտար ազգային խումբը ունենում է ավելի բարձր տնտեսական, սոցիալական և այլ կարգավիճակներ, քան ազգայինը: Այս միտումը խիստ արդիական խնդիր է, կապված արագ զարգացող տեղափոխությունների, ազգամիջյան փոխհարաբերությունների և արտագաղթի հետ:

Էթնիկ նույնությունը փոփոխական, շարժուն կառույց է: Հասարակական կյանքի փոփոխությունները, ինչպես նաև արտաքին գործոնները կարող են ցանկացած ժամանակ դրդել վերաիմաստավորելու էթնիկ պատկանելիությունը, բերել էթնիկ նույնականության ձևափոխման: Մյուս կողմից էլ՝ «որքան էլ դաժան լինի ճակատագիրը տվյալ ազգի նկատմամբ, ոչ մեկն ի վիճակի չէ նրան խանգարել ապրելու իր ներքին կյանքով, ոչ ոք չի կարող զրկել նրան սեփական արժանապատվության գիտակցությունից, խլել նրան պատկանող հոգևոր արժեքները: Դրա շնորհիվ «ես»-ը հնարավորություն ունի, հեռավորություն պահպանելով ամեն մի արտաքինի և անհսկականի նկատմամբ, նորից ու նորից վերադառնալ ինքն իրեն»<sup>10</sup>:

---

<sup>10</sup> **Լ.Աբրահամյան**, Ազգային ինքնությունը որպես պրոցես, «Ինքնություն», Եր., 1995, էջ 22:

